ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 3

«ՀՀ ԱՆ ՔԿԾ-ԷԱՃԱՊՁԲ-23/1» ծածկագրով ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի

ք. Երևան 15 նոյեմբերի 2022թ.

Ժամը 12:00

Մասնակցում էին՝

Նախագահ՝ Մկրտիչ Խաչատրյան

Անդամներ՝ Հայկ Հովհաննիսյան, Տիրան Խաչատրյան

Քարտուղար՝ Նելլի Աբովյան

1.Էլեկտրոնային աճուրդի NN 1-ից մինչև 54 (ներառյալ) չափաբաժինները չկայացած հայտարարելու մասին

1.1 ՀՀ արդարադատության նախարարության քրեակատարողական ծառայության կարիքների համար անհրաժեշտ գրենական պիտույքներ և գրասենյակային նյութեր ձեռքբերելու նպատակով, սույն թվականի հոկտեմբերի 27-ին, գնումների eauction.armeps.am էլեկտրոնային համակարգի միջոցով, հայտարարվել էր «ՀՀ ԱՆ ՔԿԾ-ԷԱՃԱՊՁԲ-23/1» ծածկագրով գնման ընթացակարգ, ըստ որի հայտերի ներկայացման վերջնաժամկետը սահմանված էր 07.11.2022թ.-ին, ժամը 11:00-ին, իսկ հետադարձ աճուրդը նախատեսված էր 08.11.2022թ.-ին, ժամը 11:00-ին:

1.2 Հիմք ընդունելով՝ ՀՀ ֆինանսների նախարարի տեղակալի 10.11.2022թ.-ի թիվ 03/26-1/19629-2022 գրությունը (գրությունը կցվում է), որով տեղեկացվում է, որ «ՀՀ ԱՆ ՔԿԾ-ԷԱՃԱՊՁԲ-23/1» ծածկագրով էլեկրոնային աճուրդի ժամանակ համակարգը խափանվել է և նշված ընթացակարգի NN 1-ից մինչև 54 (ներառյալ) չափաբաժնները «Գնումների մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի հիման վրա հայտարարվում է չկայացած:

1.3. «ՀՀ ԱՆ ՔԿԾ-ԷԱՃԱՊՁԲ-23/1» ծածկագրով գնման ընթացակարգի NN 55-ից մինչև 61 (ներառյալ) չափաբաժնների մասով ընտրված՝ հաղթող, մասնակիցների հետ «Գնումների մասին» ՀՀ օրենսդրության պահանջների համաձայն՝ կնքել պայմանագիր:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:

Հանձնաժողովի նախագահ՝ _____ **Մ. Խաչատրյան**

Քարտուղար _____ **Ն. Աբովյան**

Անդամներ՝ _____ **Տ. Խաչատրյան**

_____ **Հ. Հովհաննիսյան**